Զգուշացիր քաղդեացիներից

Կենտրոնացում Մենք պետք է զգուշանանք հակառակորդի խաբեություններից, որպեսզի կապանքներից ազատ լինենք:

Ուսումնասիրություն Բանալի համարներ՝ Գործք 13.40-41, Ամբ. 1.5-9,15

Քաղդեացիները դաժան, նվաճող ժողովուրդ էին, ովքեր ապրում էին Հին Կտակարանի ժամանակներում: Քաղդեացիների մեթոդներն ու ռազմավարությունն ուսումնասիրելով՝ մենք կարող ենք իմանալ, թե ինչպես են դևերը հարձակվում մեր՝ Հիսուս Քրիստոսի հետևորդների վրա:

- *Դևերը գողեր են:* (Սաղմ. 83.1–4,12, Մաթ. 12.43–45, Դան. 1.1–4) Քաղդեացիները թափառական ցեղ էին, ովքեր նվաճում էին երկրներ, որ իրենց չէր պատկանում: Նմանապես, դևերը գալիս են հավատացյալների հետևից՝ պարտության մատնելու և ավելի ու ավելի կապանքների մեջ պահելու: Մենք պետք է մեր սիրտն ու կյանքը լցնենք Աստծո Խոսքով, որպեսզի դադարեցնենք թշնամու այս առաջխաղացումը:
- *Դևերը չար են:* (Ամբ. 1.7-9, Եզեկ. 22.27, Գործք 20.29): Քաղդեացիները հարձակվում էին իրենց թշնամիների վրա, երբ նրանք խոցելի էին: Գայլերի նման դևերը քննում են մեզ, ուսումնասիրում մեր շարժուձևը և սպասում, որպեսզի, երբ մենք թույլ ենք կամ մեկուսացած, հարձակվեն մեզ վրա:
- *Դևերը խորամանկ են:* (Դան. 2.2, 7.25, Ա Պետ. 5.8, Հայտ. 5.5): Քաղդեացիները խորամանկ էին իրենց մեթոդներում: Սատանան կազմակերպել է իր դիվային բանակն ընդդեմ մեզ, որպեսզի անընդհատ շեղի, մոլորեցնի և կործանի մեր ապագան: Հիսուսը՝ Հուդայի Առյուծը, պարտության է մատնել սատանային, այդ մռնչացող առյուծին, որ ցանկանում է մեզ կուլ տալ:

Քննարկում

1. Ըստ այն կարծիքի, որ դևերը գողեր են, ի՞նչ են նրանք մեզանից գողանում:

2. Ինչպե՞ս է մեր սիրտն Աստծո Խոսքով լցնելը հակառակորդին խանգարում մեզանից գողություն անել:

3. Գայլերը հարձակվում են խմբի եզրին գտնվող զոհի վրա: Ինչպե՞ս է մյուս քրիստոնյաներից մեկուսացած լինելը մեզ ավելի խոցելի դարձնում հակառակորդի հարձակումների համար: Դու գիտե՞ս ինչ-որ մեկին, ով, հնարավոր է, մեկուսացած է: Ի՞նչ կարող ես դու անել, որպեսզի նրան հետ բերես հաղորդակցության և շփման մեջ:

4. Քո կյանքի ո՞ր ասպարեզ(ներ)ում է սատանան անդադար հարձակվում քեզ վրա: Ի՞նչ է Աստված քեզ սովորեցնում այդ ճակատամարտի մեջ մարտնչելիս:

Տուն տար

Ամփոփելով, հիշիր հետևյալը.

- Աստծո Խոսքը մեր զենքն է հակառակորդի դեմ:
- Քրիստոնեական համայնքի հետ հաղորդակցության մեջ մնալը մեզ օգնում է հաղթել, երբ հարձակման ենք ենթարկվում հակառակորդի կողմից:
- Հիսուսը հաղթել է սատանային և նրա ողջ բանակին, դրա համար մենք կարող ենք հաղթել հակառակորդի ցանկացած հարձակում:

Աղոթիր

Խմբում երկու կամ երեք հոգով աղոթեք միմյանց համար այն հոգևոր ճակատամարտի վերաբերյալ, որում դուք հիմա մարտնչում եք:

Նոր առաջնորդի հնարավորություն Ժամանակ առ ժամանակ ուղարկիր էլ. նամակ կամ հաղորդագրություն՝ շնորհակալություն հայտնելու նրանց, ովքեր քեզ օգնում են ծառայելու խմբին: Սա քեզ օգնում է արժևորել նրանց և հիշեցնել, թե որքան ես դու նրանց գնահատում:

Զգուշացիր քաղդեացիներից

Գործք 13.40–41, Ամբ. 1.5–6

1. Նրանք գողեր են:
Ամբ. 1.6, Սաղմ. 83.1–4, Սաղմ. 83.12, Մաթ. 12.43–45, Դան. 1.1–5

2. Նրանք չար են:
Ամբ. 1.7–9, Եզեկ. 22.27, Սոփ. 3.3, Գործք 20.29

3. Նրանք խորամանկ են:
Դան. 2.2, Ամբ. 1.15, Եփ. 6.11

Աստվածաշնչում ինը տեսակի դևեր են նշված.

Դան. 7.25, Ա Պետ. 5.8, Հայտ. 5.5

Ի՞նչ է Սուրբ Հոգին ինձ ասում այս պատգամի միջոցով: